ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/58

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Պահապան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Պահապան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Պապյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56» ծածկագրով գնանշման հարցում, հանդերձանքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/7»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ոաումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2549-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ Պատվիրատու) 18.02.2020թ.-ի թիվ 3/27/5376-20 գրության հիման վրա, 21.02.2020թ.-ին «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի 21.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/58 համարի ծածկագիրը և 24.02.2020թ.-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

02.03.2020թ.-ին, 11.03.2020թ.-ին և 23.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.03.2020թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 18.02.2020թ.-ի թիվ 3/27/5376-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով, որ ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/7» ծածկագրով հանդերձանքի գնման պայմանագրի շրջանակներում «Պահապան» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի

պահանջները, կից ներկայացրել են «Պահապան» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուի ներկայացուցիչը ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

3. <u>«Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.02.2020թ.-ի գրությամբ դիմել է «Պահապան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2549-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

«Պահապան» ՍՊԸ-ն ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ Ֆինանսների նախարարությունը 21.02.2020թ. նախաձեռնել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/58 ընթացակարգը (պատվիրատու՝ ՀՀ Ոստիկանություն) «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ուսումնասիրելով ՀՀ Ոստիկանությունից ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացված <<հիմնավորումները>> գտնում ենք, որ դրանք թերի են և հիմնազուրկ հետևյալ պատճառաբանություններով՝

Նախ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝

«պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները»:

ՀՀ Ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.06.2019թ. կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/7» մատակարարման պայմանագրում նշված պայմանների մասնակի չկատարման (745 հատ կիսավերարկուների մատակարարում չիրականացնելու) հարցում ի սպառ բացակայում է «Պահապան» ՍՊԸ-ի «մեղքը», քանզի

ՍՊԸ-ն կատարել է իրենից կախված բոլոր գործողությունները պայմանագրում նշված բոլոր պարտավորությունները ժամանակին և պատշաճ որակով կատարելու համար: Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ՀՀ Ոստիկանության տնտեսական վարչության պետի բերած փաստարկների մեղավորը ոչ թե «Պահապան» ՍՊԸ-ն է, այլ ՀՀ Ոստիկանության համապատասխան ծառայությունը, որի անգործության հետևանքով էլ տեղի է ունեցել 745 հատ կիսավերարկուների մատակարարման խափանումը:

Անհասկանալի և անբացատրելի է, թե ինչու է ՀՀ Ոստիկանությունը գնանշման հարցման հրավերի ժամկետ սահմանել 2019թ. մայիսի 14-ը, այսինքն՝ տարվա մոտավորապես կեսին, երբ գնման գործընթացը տևելու էր մինչև տարեվերջ: Ավելին՝ գնահատող հանձնաժողովի 30.05.2019թ. որոշմամբ հաստատվել է «Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը և վկայակոչելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջը անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից 5-րդ օրացույցային օրը: Ոստիկանությունը, անտեսելով 5 օրացույցային օրվա ժամկետը, «Պահապան» ՍՊԸ-ի հետ վերը հիշատակված ծածկագրով պայմանագիրը կնքել է հունիսի 25-ին, այն դեպքում, երբ մեր կողմից բանավոր բազմիցս հորդորվել է ոստիկանության ղեկավարությանը արագացնելու պայմանագրի կնքումը, պատճառաբանելով, որ պայմանագրում նշված կիսավերակուների հումք գործվածքատեսակը պատրաստի չի լինում, ըստ սպեցիֆիկայի, գույնի, կառուցվածքի և քաղաքության այն արտագրվում է, ըստ մեր իմացության, միմիայն Բելոռուսի Հանրապետության Մինսկ քաղաքի «Կամվոլ» ՓԲԸ-ում, որի հետ դեռևս 2014 թ.-ից գտնվում ենք պայմանագրային փոխհարաբերությունների մեջ: Ոստիկանության ղեկավարությանը պարզաբանվել է, որ ելնելով նախորդ տարիների փորձից, նշված գործվածքեղենի արտադրության պրոցեսը տևում է մոտավորապես 90 օր, իսկ Հայաստան առաքումը ևս մոտ 30 օր: Այդ մասին մենք 07.08.2019թ. թիվ 01/08 գրությամբ հայտնել ենք ՀՀ ոստիկանապետի տեղակալ Վ. Մովսիսյանին, խնդրելով մատակարարումների ժամկետը երկարաձգել 30 օրացույցայի օրով, որը ոստիկանության ղեկավարության կողմից համապատասխան համաձայնագրով բավարարվել է: Ըստ պայմանագրի, վիճահարույց 745 հատ կիսավերկաուի մատակարարման վերջնաժամկետը սահմանված է մինչև 2019թ. դեկտեմբերի 20-ը: Վերը նշված համաձայնագրով սահմանված 30 օրացույցային օրը վերաբերվում է նաև այս ժամկետին, հետևաբար 745 հատ կիսավերարկուի մատակարարման վերջնական ժամկետը հանդիսանում է 2020թ. հունվարի 20-ը:

Պայմանագրի կնքման օրվանից «Պահապան» ՍՊԸ-ն պատշաճ կերպով անմիջապես անցել է պայմանագրային պարտավորությունների կատարմանը: 2 օր անց հունիսի 27-ին ՍՊԸ-ն 34400 ԱՄՆ դոլլարի ընդհանուր արժողությամբ գործվածք է պատվիրել Մինսկ քաղաքի «Կամվոլ» ՍՊԸ-ին: 11.09.2019թ. մենք որպես թելերի գնման գումար «Կամվոլ» ՍՊԸ-ին ենք փոխանցել գործարքի 30%՝ 10330 ԱՄՆ դոլլար, իսկ աշխատանքն ավարտելու մասին տեղեկատվություն ստանալուն պես՝ 06.12.2019թ. փոխանցել ենք մնացած 23548 ԱՄՆ դոլլարը:

Սովորաբար մեր պատվիրած ապրանքները ՀՀ ենք տեղափոխում ցամաքային փոխադրամիջոցներով, սակայն կիսավերակուների արտադրությունը հնարավորինս արագ կազմակերպելու և ոստիկանությանը մատակարարելու նպատակով, նշված գործվածքեղենի ներմուծումը ՀՀ կատարել ենք օդանավով, որը մոտավորապես 10 անգամ թանկ է ցամաքային բեռնափոխադրումների համեմատ, սակայն հանուն պայմանագրային պարտավորության կատարման, գնացել ենք նման քայլի, որը արժեցել է 10000 եվրո գումար:

Պատվիրված գործվածքեղենը 2 խմբաքանակով, համապատասխանաբար դեկտեմբերի 10-ին և 12-ին ինքնաթիռով ներմուծվել է Հայաստան: 2-3 օր տևած մաքսազերծումից հետո, այն տեղափոխվել է մեր ՍՊԸ-ի պահեստ և հենց հաջորդ օրվանից սկսվել է 745 հատ կիսավերակուների արտադրությունը: 16.12.2019թ. թիվ 07/12 գրությամբ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Վ. Մովսիսյանին տեղյակ ենք պահել, որ սկսել ենք կիսավերարկուների արտադրությունը, խնդրելով դրանց մատակարարումը կատարել 2020թ. հունվար ամսին, պատրաստականություն հայտնելով անգամ տրամադրելու բանկային երաշխիք, որ եթե կհամարվի, որ մեր մեղքով է տեղի ունեցել մատակարարման ուշացումը, պատրաստ ենք վճարելու տույժ և տուգանք: Այդ գրությանը պատասխան չի տրվել: Միայն 2020թ. հունվարի 30-ին, երբ կիսավերարկուների ամբողջ խմբաքանակը արդեն պատրաստ էր, ստացել ենք ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետ Ա. Ներսիսյանի գրությունը այն մասին, որ մատակարարման ժամկետները 15 օրից ավելի խախտված լինելու պատճառով իրենք միակողմանի մասնակի լուծում են պայմագիրը:

Նախ նշված գրության մեջ թույլ է տրված օրերի հաշվարկի սխալ: 30 օրացույցային օրվա ավելացման համաձայնագրի համաձայն մատակարարման ժամկետի վերջին օրը հանդիսանում է 2020թ. հուվարի 20-ը, որից հետո ևս 15 օրյա ժամկետի վերջին օրը հանդիսանում է փետրվարի 4-ը: Իսկ փետրվարի 4-ի դրությամբ կիսավերարկուների

ամբողջ խմբաքանակը եղել է պատրաստ և ենթակա մատակարարման, սակայն դա չի կատարվել, քանի որ մեր գործընկերները պատճառաբանում էին, որ ավարտվել է ֆինանսական տարին և վճարում չեն կարող կատարել:

Նման պադյմաններում հարց է առաջանում, թե որն է մեր մեղավորությունը պայմանագրային պարտավորությունները մի քանի օր ուշ կատարելու հարցում: Եթե ոստիկանության համապատասխան ծառայությունը մրցույթի անցկացումը չձգձգեր մինչև 2019թ. մայիս ամիսը, ապա օրենքով սահմանված ժամկետում կնքեր պայմանագիրը, ապա նման վիճահարույց իրավիճակ չէր ստեղծվի և մեր ՍՊԸ-ն ժամանակին և պատշաճ որակով կկատարեր իր պայմանագրային պարտավորությունները:

Այս հարցում «Պահապան» ՍՊԸ-ի անմեղությունը ապացուցող փաստաթղթերը պայմանագրին կից համաձայնագիրը, մեր գրությունները ոստիկանության ղեկավարությանը, Մինսկի «Կամվոլ» ՓԲԸ-ին տրված պատվերի, կատարված գումարային փոխանցումների, գործվածքեղենի ՀՀ ներմուծվելու վերաբերյալ բոլոր փաստաթղթերը կներկայացվեն Ձեզ՝ 2020թ. մարտի 2-ին տեղի ունենալիք նիստի ժամանակ:

Մի նկատառում ևս՝ ինչպես պարզվեց gnumner.am կայքում զետեղված հայտարարություններ ուսումնասիրությամբ, ՀՀ ոստիկանության պատվերով ՀՀ ֆինանսների նախարարությունը ընթացակարգ է նախաձեռնել նաև ոստիկանությանը հանդերձանք մատակարարելու համար նրա հետ պայմանգրեր կնքած բոլոր կազմակերպություններին՝ «Դերձակ», «Մասիսի Գարուն Ֆաբրիկա», «Աբի» ՍՊԸ-ների նկատմամբ, նրանց գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով: Հարց է առաջանում, թե ինչ պատճառով է ոստիկանության հետ հանդերձանքի մատակարարման պայմանագրեր կնքած բոլոր կազմակերպությունները հանդիսանում պայմանագրային պարտավորությունները չկատարած, հետևապես գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու ենթակա: Պատասխանը առավել բան պարզ է՝ դա ոստիկանության համապատասխան ծառայությունների թերացումների արդյունքն է կապված գնումների մրցույթային գործարքների կազմակերպման և պայմանագրերի կնքման ուշացումների հետ, որը ի վերջո անհնարին է դարձնում արտադրողների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա, խնդրում ենք կարճել նախաձեռնված գործընթացը և «Պահապան» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում, այլապես ի չիք կդառնա «Պահապան» ՍՊԸ-ի կողմից տվյալ գործարքի հետ կապված 34400 ԱՄՆ դոլլարի, 10000 եվրո գումարի կատարած ծախսերը, ՍՊԸ-ն կդադարեցնի գործունեությունը, որի արդյունքում մի քանի տասնյակ անձինք կհամալրեն գործազուրկների բանակը:»:

4. <u>ՍՑ-LO-2020/58 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.06.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/7» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է մատակարարման ենթակա ապրանքի ժամկետները:

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/7» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/77 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/7» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել):

ՀՀ ոստիկանությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 18.02.2020թ.-ի թիվ 3/27/5376-20 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 21.02.2020թ. թիվ 26/26-1/2549-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/7» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/77 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/7» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել):

ՀՀ ոստիկանությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 18.02.2020թ.-ի թիվ 3/27/5376-20 գրությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 30.01.2020թ.-ին՝ հիմք ընդունելով թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/7» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/77 ծանուցումը www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակելու հանգամանքը, սակայն Պատվիրատուն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ 18.02.2020թ.-ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն

հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2549-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/58 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**